

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՔԱԿԱՆ

Երանի, որ հայածուած էն տեղաբռնիքան համար.

(Պետրով բահանայից)

Փարիզում կար մի անդրիագործ, որը պատրաստում էր, «Ճշմարտութիւն» արձանը: Նա ուզում էր կնոջ կերպարանքով պատկերացնել ճշմարտութիւնը, և այնպէս, որ նորա դէմքի մաքուր, պայծառ գծերից իսկոյն իմանար տեսնողը, թէ դա «Ճշմարտութիւնն» է, և որ հէնց տեսնողի իրեն սիրտն էլ մաքրուէր, հոգին պայծառանար:

Երկար աշխատում էր նա արձանի վերայ,-քանզակում էր, չէր հաւանում, վշրում էր ու նորից շինում: Մեծագին պատուէրներ էին առաջարկում նորան, բայց նա բոլոր էութեամբ տարուած էր իւր գործով, գիտէր միայն և մտածում էր իւր «Ճշմարտութեան» մասին և, որի սիրուն շատ անգամ իւր անձն էլ էր մոռանում. ապրում էր նա ամենավերին յարկի մի փոքրիկ սենեակում, ուտում էր կիսակուշտ, շատ անգամ վառելու փայտ էլ չէր ունենում: Վերջապէս աւարտեց գործը: Նորան յաջողուեց մարմացնել իւր միտքը կաւի մէջ: «Ճշմարտութութիւնը» կանգնած էր նորա առաջ իւր բոլոր անեղծ սրբութեամբ ու գեղեցկութեամբ: Նա գոհ էր. կատարում էր Աստծուց ներշնչուած-պատուիրուած գործը: Եւ սկսում է ուշքի գալ, սթափուել: Նա յիշեց որ այս վերջին օրերը տանից դուրս չէր եկել, վառարանը վաղուց չէր վառուած, իսկ դրաում սառնամանիքներ էր: Գնալ մէկից փայտ կամ ածուխ խնդրելու՝ արդէն ուշ էր:

Ստիպուած էր սպասել մինչև առաւօտ: Բայց կարող էր մինչև այդ ժամանակ թարմ-թաց կաւը սառել-ճաքճաքել,-և կորած է արձանը: Եւ ահա նա հանում է իւր հագուստը, զգուշութեամբ փաթաթում «Ճշմարտութիւնը»,

վերայից էլ ծածկում վերմակով. իսկ ինքը կիսամերկ՝ անկողին է մտնում դողդողալով։ Առաւօտեան գալիս են բարեկամները, բայց անում արձանը ու մնում հիացած։ Իսկ այդ ժամին արձանագործն անշունչ ընկած էր։ Նա սառել էր, փէտացել, սակայն դէմքը պայծառ էր ու ուրախ։ Ցրտաման եղաւ նա, սակայն չզգաց ցրտի տանջանքը։ Նա ուրախ էր, որ ստեղծեց և պահպանեց «Ճըշմարտութիւնը»։ Երբ մարդ տարուած է մի մտքով-հոգսով, նա մոռանում է ամեն ինչ. երկար ժամանակ կարող է մնալ առանց ուտելու, խմելու. Նա չի զգում տանջանք, նեղութիւն։ Կոպէկի համար դողացող ժլատը կարող է քաղցից մեռնել ոսկով լիքը մնդուկի մօտ։ Հայրենիքի սիրուն կոռուղ զինուորը չի զգում մահացու վերքը։ Մի վայրկեան ուշքի գալով՝ վերջին շնչում հարցնում է, «ով յաղթեց» և երբ նորան պատասխանում են «թշնամին յաղթուած է», ուրախ-ուրախ փչում է հոգին։ Հին դարերի մեծ գիտական Արքիմիդէսը զբաղուած էր հողէ յատակի վերայ դժագրած իւր հաշիւներով այն ժամերին, երբ դրսում, հայրենի քաղաքի փողոցներում վերջին կոփւն էր մղւում և վճռում էր նորաերկրի բաղդը։ Երբ հովվմէական զինուորը արիւնոտ սուրը ձեռին ներս ընկաւ նորա սենեակը և հարցրեց անունը (հրամայուած էր Արքիմիդէսին չսպանել), նա անհամագուտանալով՝ մի գուցէ զինուորը կոխկրճէ, քանդէ իւր հաշիւները, դէն հրեց զինուորին ասելով, «գծագրածիս ձեռք մի տուր»։ Արքիմիդէսի համար գիտութեան ճըշմարտութիւնը կեանքից էլ թանկ էր։ Ուրեմն պարզ հասկանալի է որ մարդկանց համար էլ Աստծու արդարութիւնը կարող է դառնալ թանկ ամեն բարիքից, յաջողութիւնից և առողջութիւնից, թանկ նոյն իսկ կեանքից։ Աւետարանն ասում է. «Երկնքի արքայութիւնը նման է Շվաճառականի, որը դեղեցիկ մարգարիտներ է որոնում. և կտնելով մի պատուական մարգարիտ, զնում ծախծում է ինչ որ ունի և գնում այն մարգարիտը»։ (Մատթ. XIII. 45-46). Նայեցէք մարտիրոսների

հին-քրիստոնէական ժամանակուայ դերեզմանները-մատուռները. նըանցում հանգչում են գելարանների մէջ վշրուած, զազանների ճանկերում յօշոտուած, խաչի վերայ խանձուած մարմիններ. և այդ մատուռների պատերի վերայ եղած հազարաւոր սրբոց պատկերների մէջ չէք գտնիլ մի ամենափոքրիկ ակնարկ անզամ կեանքի մէջ հանգուցեալների կրած զառնութեանց մասին, նոցա զարհուրելի մահացման մասին: Ամենուրէք պատկերացրած են հեղ աղաւնիներ, բարի հովիւր, գառն ու շուշան, խաղողի որթ, հասուն հասկեր: Երեսում է, որ աւետարանական ճշմարտութեան համար կրած տանջանքն ու մահը չէին սարսափեցնում քրիստոնեաններին: Նոքա գիտէին Յիսուսի խօսքերը թէ՝ «Երկնքի արքայութիւնը ձեռք են բերում բռնութեամբ (ուժով) և գօրեզներն են որ տիրում են այն» (Մատթ. ֆԱ. 12), և դորա համար էլ հանգիստ կերպով զոհում էին իրենց կեանքն ի սէր Աստծու արդարութեան յաղթանակելուն: Նոքա հաստատ հաւատացած էին, որ կարող են իրենց սպանել, բայց ճշմարտութիւնը չի մեռնիլ, և որ իրենք յանուն Աստծու արքայութեան թափած ամեն մի արտասուքի և կաթիլ քրտինքի զնով ձեռք են բերում այդ արքայութեան համար նոր հող, և այդ վարձադրում էր նոցա աշխատանքը հարիւրապատիկ. տալիս էր նոցա նոր ուժ նոր աշխատանքի, նոր զոհաբերութեան համար յանուն Աստծու արքայութեան մարդկանց մէջ:

Նոյն աշխատանքը, նոյն նեղութիւնը, նոյն զոհաբերութիւնը այժմս էլ կան Աստծու արքայութեան ամեն մի մշակի առաջ, և այն ամենքի, ով ծառայում է, կամ ցանկանում է ծառայել Աստծու արդարութեանը երկրի վերայ: Արդարութիւնն ու ստութիւնը, բարին ու չարը, որպէս լոյսն ու խաւարը, կրակն ու սառուցը՝ չեն կարող յարմարուիլ միատեղ: Մէկը միւսին ոչնչացնել է ձգուռմ: Բարին գործում է բացարձակ ազնիւ ճանապարհով, աշխատում է մարդկանց խելքի բերել անկեղծ ու սրտազին խօսքերով, զարթեցնում է մարդկանց մէջ

քնած խիղճը ջերմ կոչով դէպ Աստծու արդարութիւնը։ Իսկ չարն՝ ընդհակառակն, աշխատում է սաղմի մէջ խեղդել ամեն բարի սկզբնաւորութիւն, ամեն բարի միտք։ Միջոցների մէջ խտրութիւն չի դնում նա. ուր կարելի է՝ գործում է ուժով, բռնութեամբ, իսկ ուր ուժը չի կարող յաղթել՝ դիմում է խորամանկութեան, շողոքորթութեան և խարէութեան։ Մայրայեղ դէպքում բաւականանում է ստոր բամբասանքով, անպատիւ կատակով, չարախինդ ծաղրով, կոպիտ ծանակով։ Յիշեցէք Աւետարանից այն, որ երբ Փրկիչը ծնուեց, Աստծու արդարութիւնն աշխարհ եկաւ, չարը Հերովդէսի միջոցով աշխատում էր հէնց օրօրոցի մէջ ոչնչացնել այդ արդարութիւնը։ Անցնում է երեսուն տարի, Յիսուս ծոմով և աղօթքով պատրաստում է մարդկանց փրկելու գործին, չար ողին զանազան միջոցներով, փորձութեամբ ու խարէութեամբ փորձ է անում յետ կանգնեցնել նորան Աստծու ճանապարհից։ Յիսուս սկսում է ուսուցանել, նորան ծաղրում են, բենեղզերուղ անուանում (Մաթ. ԺԹ. 24), ասում են թէ նա հրէա չէ, Սամարացի է, որ նա պէվ* ունի։ Ահա այս տեսակ է լինում անխուսափելի ճանապարհն արդարութեան, բարոյ, սիրոյ և այն ամենքի, ով ծառայում է դոցա, ով գործում է յանուն դոցա։ Այդպէս էր, այդպէս եղել է միշտ և հաւանական է այդպէս էլ լինի միշտ։ Փրկիչն ասում էր իւր աշակերաներին. «Այդպէս հալածեցին մարդարէներին, որնք ձեզանից առաջ կային. այդպէս են հալածում ինձ, այդպէս կհալածեն և ձեզ»։

Աչքացաւ ունեցողները չեն կարողանում տանել արեգակի լոյսը, բարկանում են, երբ պայծառ լոյս է ընկնում նոցա աչքին։ Խորը քնածները չեն սիրում, երբ

*) «Դէվ» բառի սովորական ուղղագրութիւնը (դեւ) սխալ է։ Եթէ սեռ. հլ. ասւում է դիւի, կնշանակէ որ առաջին վանկի ի ձայնը սկզբնական բառի է ձայնն է, օր'՝ սեր—սիրոյ, զեն—զինու, վեր—վիրաց, դեվ—դիւի։ Ծ. Թ.

նոցա արթնացնում ես. քնար-քնար բարկանում են նոքա, հայինոյում, նոյն իսկ կոռուել սկսում: Սակայն երբ շուրջը հրդեհ է, մենք ուշադրութիւն չենք դարձնում այդ բարեկութեանը, աշխատում ենք զարթեցնել նոցա, թէ կուզ խոկէին, դէն հրէին մեզ: Երեխան ուզնում է ընդունել դասը, բայց օգտակար, իւր ներգործութեամբ փրկարար դեղը, թէ լաց-աղաղակով դէն հրում դէմքը ծամածուելով, դա միևնոյն է բժշկի համար, նա չէ դադարում դեղն առաջարկել հիւանդին: Այդպէս էլ կեանքում պէտք է վարուել չարի դէմ մղուած կուում, չպէտքէ քաշուել չարի կողմից եղած թշնամական դիմադրութիւնիցը:

Մարդկանց կեանքի ճանապարհը խիտ աճել-բռնուել է անսարդարութեան փուշ ու տատասկով: Մարդկանց չարութիւնը, մոլորութիւններն ու անօրինութիւններն որպակէս խիտ անտառ՝ անանցանելի մացառուտով փակել են մեր առաջ այն ճանապարհը, որ տանում է դէպ Աստուած, դէպի Նորա սէրն ու արդարութիւնը, դէպի Աստծու Արքայութիւնը երկրի վերայ: Պէտք է, որ մէկն այդ խիտ մացառուտի միջովն արահետ բացանի դէպ Աստծու արդարութիւնը, կտրատէ, մաքրէ փուշն ու տատասկը, և այդ դորձն առանց նեղութեան և ճակոստուելու չի' կատարուիլ. երբեմն ճիւղը կզարկուի քեզ և կցաւեցնի, կամ կոճղերի կհանդիպես և կամ փշերի ասեղները խորը կմխուեն կաշուիդ մէջ:

Պատերազմում, — երբ թունդ ճակատամարտով պէտք է վերցնել թշնամու ամրոցը, որ շրջապատուած է խրամատներով ու բարձր պարիսպներով, կռուողների առաջին շարքերն ընկնում են սպանուած կամ մահացու վէրք ստացած: Սակայն յետին շարքերն անցնելով իրենց հերոսընկերների դիակների վրայով, որպէս սանդուղքների, վերեն ենում և առնում ամրոցն ու կործանում չարի զօրութիւնը: Երկրի վերայ մշտական պատերազմ է. — պատերազմ չարի և բարւոյ մէջ. և մենք, Փրկչի աշակերտներս կոչուած ենք յանուն Աստծու արդարութեան յաղթանակի՝ երկնքի հրամանատարութեամբ կոիւ մղել չարի և ստու-

թեան դէմ: Մի վախեցէք ճանկուտուածքից, վէրքից կամ հաշմանդամանալուց, մի վախեցէք չարի ծաղրից ու թըշ-նամանքից: Քարքարուտ լեռնիվեր բարձրացողն առանց ճանկուտելու վէրքի կամ կոտրուածքի չի մնալ. գուցէ վերից կզորուի մի քար ու տակով կամէ, կջարդէ նորանչ Այդ ամենը կարելի բաներ են: Սակայն այդ ամենը չեն կարող ստիպել ձեզ կանգ առնելու: Պինդ կտչելով — կախուելով ամեն պատահող ցցուածքից, թուփից կամ խոտից՝ բարձրացէք շարունակ վեր վեր, դէմ արեգակը դնացէք, դէպի լոյսը, դէպ Աստծու լայն-արձակ ազատութիւնը, և այնտեղից — Աստծու արդարութեան լեռան բարձունքից գոչեցէք վարը կանգնածներին. — «Եկէք այստեղ, որ ճահճուտ տափարակներումն էք, որ գտնւում էք «աղջամուղջի և մառախուղի մէջ, որ ծանր-ծանր սև «ամպերի ներքոյ էք, եկէք այստեղ: Այստեղ մօտ է եր-«կընքին, օդը մաքուր, կուրծքը շնչում է ազատ. այստեղ «մարդու հոգին անդորր է և ուրախ»:

Երանի ձեզ, Երբ կհալածեն ձեզ ցածրերամ—տափարակներում, Երբ՝ ձեր վերելքի միջոցին կհայհոյեն ձեզ, կհալածեն և ամեն տեսակ անարդար չարախօսութիւններ կանեն ձեր մասին Քրիստոսի արդարութեան պատճառաւ։ Ցնծացէք, ուրախ եղէք։ Այդպէս հալածեցին մարդարէներին, որոնք ձեզանից առաջ էին։

Թարգ. Մարկոս ԲԻԿ. Տ. Մկրտչեան.